

## Վ. Ա. ՔԱՍՅԱՆ, Միջին հայերենի բառակապակցություններ, Երևան, 1984

ՀԱՅ ԳԱ հրատարակությամբ 1972—1975 թթ. ընթացքում լույս տեսավ «Ակնարկներ միջին գրական հայերենի» երկհատոր աշխատությունը, որտեղ մանրամասն քննված են մեր լեզվի այդ շրջանի նշյունարանությունը, բառագիտությունն ու բերականությունը: Եվ ահա միջինհայերենյան ուսումնասիրությունները հարստացան նաև բառակապակցությունների ուսմունքով:

Դեռևս ժամանակակից հայերենի բառակապակցություններին նվիրված մենագրության մեջ հեղինակը մանրամասն մշակել է բառակապակցության ուսմունքը՝ շարադրելով ուսուստահմանյան, այնուհետև հայ լեզվաբանության մեջ այդ երևույթի վերաբերյալ բոլոր տեսություններն ու կարծիքները: Այս ծավալուն աշխատության մեջ հեղինակը մանրամասն քննում է ժամանակակից հայերենի բառակապակցությունների տեսակները, նրանց բաղադրիչների շարահյուսական առանձնատկությունները, կապակցման յուրահատկությունները:

Ժամանակակից հայերենի ու գրաբարի բառակապակցությունների դրսևորման և միջին հայերենի բառակապակցությունների արտահայտություն, դրանց ընկալման հարցում որոշակի տարբերություն գոյություն ունի խոսքն այն մասին է, որ եթե ժամանակակից հայերենը և գրաբարը գրավոր մշակված ու կանոնավոր լեզվական օրակներ են, ապա միջին հայերենը մի յուրատեսակ լեզու է, որի մեջ գիրկրնդիստոն հանդես են գալիս ինչպես անմշակ, չնորմավորված լեզվական տարրեր, այնպես էլ բարբառային ձևեր, մյուս կողմից էլ՝ գրաբարյան իրողություններ: Եվ ահա զուտ միջինհայերենյան լեզվական իրականությունների սահմանազատումն ու գնահատումն առավել ճշգրիտ կլինի և շահեկան կդառնա ժամանակակից, մանավանդ գրաբար լեզվի ուսումնասիրությունից հետո:

Այս առումով «Միջին հայերենի բառակապակցություններ» կարևոր արժանիքը միջինհայերենյան լեզվական անմիօրինակությունների ամենաներքին դրսևորումները ճիշտ նկատելու ու գնահատելու փաստն է, որ զգացվում

է հետազոտության մեջ՝ յուրաքանչյուր քայլափոխում:

Աշխատությունը բաղկացած է հինգ գլխից՝ «Գոյականի բառակապակցություններ», «Ածականի բառակապակցություններ», «Բայական բառակապակցություններ», «Մակբայական բառակապակցություններ» և «Դերանվան լրացումների մասին»:

Բոլոր տեսակի բառակապակցությունները քննված են ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության՝ հաշվի առնելով նաև լրացում դարձող խոսքի մասերի իմաստային ու բերականական արտահայտությունները: Այսպես, գոյականի լրացում են դառնում գոյականը՝ ուղիղ և հյուսված ձևերով, նախդրավոր և հետադրությամբ կառույցները, ածականը, թվականը, դերանունը, դերբայները և մակբայը: Ածականի լրացումներն են գոյականը, նախդրավոր ու նախդրությամբ կառույցները, մակբայը և դերանունը, ածականը և հազվադեպ՝ թվականը: Ածականական բառակապակցությունների մեջ հեղինակը դիտում է արժեքավորում է նախադասությանը հարաբերակից յուրատեսակ մի բառակապակցություն, որը անվանում է «ածականի բառակապակցություններ նախադասության կառուցվածքով առանց ստորոգման»:

Օրինակ՝ Բժշկապետին շատ խօսք են ասացել մէկ մէկին հախառակ: Բերանդ շաբու ի լի թութակ լեզու ես: Թիւրլու թիւրլու հոտեր մինըն քանց միսն սիրուն (էջ 73):

Եթե գոյականական և թե՛ ածականական բառակապակցությունների բառական-բերականական արտահայտությունների ու կապակցելիության դրսևորումների մանրամասն քննությունը զուգահեռ յուրաքանչյուր դեպքում վեր են հանվում զուտ միջինհայերենյան օրինաչափություններ, անկանոնություններ ու անհետևողություններ, որոնք հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն գրաբարի, ինչպես և ժամանակակից հայերենի համեմատությամբ, այլև ընդհանուր լեզվաբանական առումով: Բերենք նկատված յուրահատկություններից մի քանիսը:

ա) Լրացման գեր կատարող ածականի՝ գոյականի հետ համաձայնության օրինաչափությունները, ինչպես գիտենք, գրաբարում լրացման գերով հանդես եկող ածականները գործածվում էին ե՞րևոպագաս, ե՞րևախագաս, որով էլ հիմնականում կանոնավորվում էր դրանց համաձայնությունը: Միջին հայերենում, ինչպես գրում է հեղինակը, «ավելի նկատելի են նախադաս, մասամբ և ետադաս ածականների՝ լրացցալին չհամաձայնելու երևույթները, քան գրաբարում» են (էջ 33): Հենց բերված օրինակների համեմատությունից երևում է, որ գրաբարին հարադատ քննադրերում նկատվում է համաձայնյալ գործածություն, իսկ այն բնագրում, որի մեջ առհասարակ կան միջինհայերենյան տարրեր, հանդես են գալիս անհամաձայն որոշիչ-որոշյալները Համեմատներ բերված նախադասություններից երկուսը: Այժմ ի վերայ բարձի մեծագույն նստելի: Յաշխարհիս եմ կացել, մեղոք ցնորել, ու զանձէն հոգեւոր աղբատ մնալի:

Երբեմն էլ, ինչպես նշում է հեղինակը, անհետևորդությունը հասնում է նրան, որ կողք-կողքի գործածվում են երկու ձևերն էլ, ինչպես՝ «Զօրս պոռնարեց անքիւ և անհամարս: Քրիստոս աստուած բաղցր և բարի, մասններ նման զիս ով կրնոք սուրբ և բարու ինք հանդիպի» (էջ 34): Իսկ սրանցից հանդիպում են նաև պարզապես սխալագրություններ, և թերևս այդպիսին պետք է դիտել որոշիչի գործածությունը հետևյալ օրինակում՝ «Պատահ է, որ սատին ջուր տաս ի տալու թիւան ի ժամն» (էջ 35):

բ) Գոյական որոշիչի ուղղականով գործածությունը: Ուսկապված է վերը բերված օրինաչափություն հետ: Որոշիչի ուղղականով հանդես գալիս «գրաբարում չկար կամ համարյա չկար», ինչպես ասում է հեղինակը, օրինակներ՝ լուրբ գորագ, քատուկ կանանցս, Բրիստոնէ ծառայի, Խալուն կնոջէ, կաղնի մահակաւ, սեպուռ աւանց և այլն (էջ 10):

գ) Թվականով արտահայտված լրացումների անհետևորդություններ, երբ «գործածվում են ե՞րևախագաս, ե՞րևադաս, երբեմն եղակի գոյականի, երբեմն հոգնակի գոյականի հետ, երբեմն համաձայնվելով, մեծ մասամբ չհամաձայնելով» (էջ 38), ինչպես օրինակ՝ «Այն նիւթն, որ բորբոսի, չրնի ի մէկ աւալաց, այլ ժողովին ի մեկ տեղի»:

դ) Խոսքի մասային անցումներ. սա լեզվական ընդհանուր օրինաչափություն է և գոյություն ունի լեզվի պատմության մյուս շրջաններում, հետևաբար և միջին հայերենում: Որպես այդպիսի երևույթի արտահայտություն՝ բերվում են մի շարք բառերի որոշիչային կիրառության մեջ ածականի և գոյականի խոսքի մասային ի-

մաստների համատեղ դրսևորման դեպքեր, ինչպես՝ վկայական, Բերական, սրիկայ, Ելուգակ, բորբոս, փոյր, Եախագան, կոյս և այլն (համար ի բորբոս գիւնութենէ, փոյր պատգամին, աղիկս հինգ հարիւր կոյս...): Ավելի տարածված է ածականի և գոյականի սեռական հոլովածների արժեքների համատեղումը, ինչպես՝ վերի, վարի, յիտի, առաջի, եւրբի, գնո, տանոյ, Խալոյ լարման, Խնդման և այլ բառերում (համար՝ տանոյ կաղամբ, կերակուր Խալոյ, լետի խելացա, առէի անուս, ուտի տուր (էջ 36—37):

Սակայն այստեղ դժվար է համաձայնվել որոշ օրինակների մեջ ածականների մակրայական հատկություն վերագրել ուն, մասնավոր որ բերված օրինակներում դրանք գոյականների վրա են դրված: Այսպես, դիտված են հետի լետանց, յարտաբուստ կողմանէ, ի վերուստ կողմանէ, Բիչ մի ափին, տգիտաբար մոլորութիւնս, հետուստ տեղ: Վերապահություն կարելի է անել թերևս տգիտաբար մոլորութիւնս բառակապակցության վերաբերյալ, որտեղ տգիտաբար բառը կարելի է մակրայ դիտել՝ Ենելով այն բանից, որ մոլորութիւն գերադաս անգամ ինքը բայական ծագում ունի, որի հետ ունեցած կապակցությունը պահպանվել է նաև այդ բառի գոյականական դրսևորման մեջ (համար՝ տգիտաբար մոլորիլ):

Թե՛ գոյականական, թե՛ մյուս տեսակի բառակապակցությունների բաժնում, հիշտ է, հետադորդի բուն նպատակը չի եղել բառական, առանձնապես բառագործածության օրինաչափություններ դիտելը, բայց բառագործածությունը լեզվական այն ոլորտն է, որի հետ առնչվում են մյուս՝ բառային ու շարահյուսական մակարդակների միավորները, և այս կապակցությամբ, որպես աշխատության կարևոր արժանիք, անհրաժեշտ է նշել, որ նկատված են գուտ միջինհայերենյան բառագործածություններ և դրանց ձևաբանական առանձնահատկություններ:

Այսպես օրինակ, նկատված է, որ կա որոշակի միտում մի բառի դերանվան և մեկ բառի թվականի իմաստով գործածության. «Միջին հայերենում մէկ ձևի գործածական դասակարգումը հիմնական մի ձևը գործածվում է անորոշ դերանվան իմաստով: Որինակներ՝ Քանի ամ դնացեալ կար ինձ մեկ հորեղբորդի մի...» (էջ 38): Մեկ թվում է, սակայն, որ մի-ի գործածությունը այստեղ ավելի շատ անորոշ հոգի իմաստով է:

Այնուհետև «գործածվում են մի շարք գուտ միջինհայերենյան ածականներ, ինչպես՝ գաղտուկ, հալամաշ, ալցեղ, մազէ, շիւ, Բալուկ» (էջ 36):

Հետաքրքրական են նաև նախադրությունների մեջ հանդես եկող նոր բառերը, որոնցից են զեւ,

դիմաց, ի դիմաց, ետև, զարդ, զարդի, ինչու, ինչու, ի դեմ, խել (ի խել), համար, հանց, հանցում և այլն (էջ 137—138):

Այստեղ անհրաժեշտ ենք համարում առարկել այն բանի դեմ, որ ղերթ/զերդ, գէդ/զետ, վասն/վանց, շափ/շաք ձևերը թվարկվող բառերի շարքում համարվում են առանձին ինքնուրույն բառեր, մինչդեռ դրանք նույն բառի դրության տարբերություններ են:

Ինչպես ասվեց, դիտված են նաև ձևաբանական առանձնահատկություններ. այդպիսին է բրինակ, ներգոյական հոլովի՝ ժամանակակից ձևով և իմաստով գործածությունը, որ նկատվել է ինչպես XV դարի ձևագրերում, այնպես էլ Մխիթար Հերացու բժշկարանում. Տուր... րակ-լայի չուր ճշի կարում, և հաու ձագ... (ՄՀԶԲ, ԷԵ), Եւ դայլ ամենայն կերակրողքս մեր, որ այս գեղումս զմեզ կերակրել են... զվարձս առ-ջեն ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ (Փն դարի հայերեն ձևագրերի հիշատակարաններ, 1-ին սաս, 479):

Աշխատանքի երրորդ գլուխը, որտեղ քննված են բայական բառակապակցությունները, ամենից սովորական է Այստեղ մանրամասն ներկայացված են ոչ միայն բայի լրացում դարձող խընդ-բային ու պարագայական բոլոր արտահայտությունները, այլև, որ ամենից արժեքավորն է, տրված են բայերի իմաստային բոլոր մեծ ու փոքր թեմատիկ խմբերը: Եթե որպես օրինակ բերված բնագրային հատվածներին հանենք ընդ-դժված բայերը իրենց իմաստային խմբերով, ապա ըստ երևույթին կունենանք միջին հայերենում գոծածվող բայերի թեմատիկ դասակարգում: Նկատված են բազմատեսակ շարահյուսական ու իմաստային հարաբերություններ, որոնց լեզվական գնահատության ընթացքում հետադու-տողը, ինչպես ասվեց, ստիպված է թափանցել բառերի իմաստային ոլորտները ևս: Օրինակ, տրականով լրացումների համար դիտված են հանգման, մատուցման, շահի, հաղորդման, ըն-կալման, ուղղության, վերաբերության, սահմա-

նափակման, համապատասխանության, փոխա-դարձ կապի, փոխարինության, միջնորդական խնդրի, ներգործող խնդրի իմաստներ (էջ 94—105), բացառական հոլովի համար՝ որպես խնդրային իմաստներ՝ անջատման (զատման), խուսափման, պակասության, պահանջման, անձի-ելակետային, ելման-սկզբնականի, ելման, նու-թի, սերման (ծագման), միջոցի, ընդօրինակ-ման, մասնական, վերաբերության, հաղորդման, հանգման, ներգործող խնդրի, պասսիվ ներգոր-ծության, համեմատության և գերադրության, սահմանափակման, իսկ որպես պարագայական տեղի, ժամանակի, պատճառի, հիմունքի, ձևի, նպատակի հարաբերություններ: Պետք է ասել, որ եթե այսպիսի իմաստային մասնատվածու-թյունը («հիպերսեմանտիզմ» կոչված երևույթը) չի արդարացվում նախադասության վերլուծու-թյան ժամանակ, ապա բառակապակցություննե-րի անդամների հարաբերությունների ուսումնա-սիրման ղեկավարման միայն հարստացում է այն և հիմք ստեղծում իմաստային բաղադրիչների (իմաստայինների) հետագա քննության համար:

Քննարկվող գլխում հետաքրքրություն են ներ-կայացնում նաև «Բայի լրացումները նախադ-րությամբ կառուցներով» (էջ 137—154) և «Բա-յի լրացումները նախադրովոր կառուցներով» (էջ 158—186) բաժինները, որտեղ հեղինակի կողմից ոչ միայն ուսումնասիրված են նախդիր-ներով ու նախադրություններով ձևավորվող լը-րացումներն ու նրանց շարահյուսական կապը գերադաս անդամի հետ, այլև, ինքնին վերցրած, փաստորեն քննված են միջին հայերենի կապե-լը (նախդիրներն ու նախադրությունները) իրենց բազմապիսի զրահորդումներով, իմաստային սո-սանձնահատկություններով և բառական ու քե-րականական նշանակություներով:

Այսպիսով, Վ. Քոսյանի «Միջին հայերենի բառակապակցությունները» աշխատությունը ոչ միայն կարևոր է միջին հայերենի լեզվական այդ մակարդակի ուսումնասիրության, այլև առ-հասարակ ընդհանուր լեզվաբանական առումով:

Լ. Լ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ